ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր
Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր

ԼԻԼԻԹ ԻՍԿՈՅԱՆ

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի, դասախոս, հայցորդ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՅՈՒՐԱՑՈՒՄԸ ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հոդվածում դիտարկված են ուսանողների կողմից արվեստագիտական առարկաների ուսուցման գործընթացում ազգային-հոգևոր արժեքների յուրացման մեթոդաբանական հիմքերը և փուլերը: Հիմնավորված է, որ բարձրագույն կրթությունը որպես սոցիալ-մշակութային կենսագործունեության ոլորտ՝ նպաստում է այնպիսի անձի հոգևոր հարստացմանը, բարոյական ազատությանը, ով ունակ կլինի կրելու երկրային քաղաքակրթության և մշակութային ժառանգության նկատմամբ պատասխանատվության բեռը, պահպանելու և հարստացնելու համամարդկային արժեքները: Ներկայացված և բնութագրված է ուսանողների ազգային-հոգևոր արժեքների և ստեղծագործական կարողությունների յուրացման ալգորիթմը, և այդ գործընթացի վրա ազդող գործոնները:

Հանգուցային բառերև արտահայտություններ. ազգային հոգևոր արժեքներ, մշակույթ, արժեհամակարգ, կրթական հարացույց, հայ արվեստի պատմություն, գեղարվեստական կրթություն, արժեբանական ուղղություններ:

Ըստ ժամանակակից կրթական հարացույցի՝ մարդը ոչ միայն գիտելիքների, վարքի նորմերի, այլև համամարդկային արժեքների կրողն է: Բնականաբար ազգային-հոգևոր արժեքների ուսումնասիրումը և յուրացումը մանկավարժական գիտության արդի գերակա խնդիրներից մեկն է: «Արժեք» հասկացությունը ենթադրում է աշխարհի հետ մարդու հարաբերության բնութագրում: Ըստ Մ.Ս.Կագանի արժեքը «սյուբեկտի համար օբյեկտի նշանակությունն է» /3, էջ 18/:

Ըստ ռուս գիտնական Ն.Ն.Մոյիսեևի՝ անհրաժեշտություն է առաջացել նորովի մոտեցում ցուցաբերել և վերակառուցել արժեքների այն համակարգը, որոնք հաստատվել են դարերի ընթացքում, քանի որ «մարդկությունը մոտեցել է այն եզրին, որից այն կողմ պետք են նոր բարոյականություն, նոր գիտելիքներ, նոր մտածելակերպ, արժեքների նոր համակարգ» (4, էջ 30)

Բարձրագույն կրթությունը որպես սոցիալ-մշակութային կենսագործունեության ոլորտ նպաստում է այնպիսի անձի հոգևոր հարստացմանը, բարոյական ազատությանը, որն ունակ կլինի կրելու երկրային քաղաքակրթության և մշակույթի ճակատագրի նկատմամբ պատասխանատվության բեռը, պահպանելու և հարստացնելու համամարդկային արժեքները: Կրթության միջոցով սերնդից-սերունդ փոխանցվում է հոգևոր-մշակութային արժեքները՝ իրենց ազգային և համամարդկային դրսևորումներով: Ուստի ժամանակակից բարձրագույն կրթության գերակա նպատակներից մեկն է դառնում համամարդկային արժեքների վերաբերյալ տեսությունների, հայեցակարգերի, ինչպես նաև անհատական հոգևոր էքզիստենցիալների հիման վրա ուսանողների կողմից սեփական ներաշխարհի և արժեհամակարգի ձևավորման կարողությունների զարգացումը:

Անտիկ շրջանի հայ հելենիստական մշակույթի դասական արժեքները իրենց ազդեցությունն են թողել հայկական ուշ վերածննդի դարաշրջանում ձևավորված հոգևոր արժեքների վրա, որոնք հիմք հանդիսացան այդ ժամանակաշրջանի մեծ մտածողների՝ Հովհաննես Իմաստասերի, Հովհ. Որոտնեցու, Գր. Տաթևացու, արժեքային գիտակցության ձևավորման համար, ովքեր գիտելիքը, կրթությունը, ուսումնառությունը համարեցին անանց արժեքներ:

Վերածննդի դարաշրջանի հայ մեծագույն մտածող, փիլիսոփա մանկավարժ Գր.Մագիստրոսը արժեհամակարգի գերակա արժեքներ էր դիտարկում գիտությունը, կրթությունն ու լուսավորությունը, գիրքն ու գիտելիքը, միտքն ու բանականությունը: «Գր. Մագիստրոսը, լինելով իր ժամանակի կրթության ու լուսավորության բարձունքներում և դավանելով այդ արժեքներին, նույնն ավանդում է իր սաներին՝ նրանց արժեքային կողմնորոշումը նպատակաուղղելով գիտելիք-գանձերը և դեպի կրթությունն ընդհանրապես» (2, էջ 50):

Հայ ազգային-հոգևոր արժեքները իրենց հետագա զարգացումն են գտել մեր մեծ մտածողների՝ Մխիթար Սեբաստացու, Խ. Աբովյանի, Լ. Շանթի, Հ. Հիդլյանի, Ղ. Աղայանի և այլոց աշխատություններում ու ստեղծագործություններում:

Գերմանացի խոշորագույն փիլիսոփա Հեգելը «..Կրթությունը հիմնական արժեք է համարում ոչ միայն առանձին անհատի, այլև ամբողջ մարդկության համար» (2, էջ 21): Արժեքների մեկնաբանման վերաբերյալ մոտեցումներում կարևոր նշանակություն ունեցավ Ֆ. Նիցշեի տեսությունը: Ֆ. Նիշցեն բարձրագույն արժեք էր համարում անձնավորությունը, նրա զարգացումը [2, էջ 23]:

Ընդհանրապես արժեբանական ուղությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իբրև արժեքների ձևավորման և յուրացման աղբյուր հանդես են գալիս մարդկային պահանջմունքները: Այսպես, օրինակ, պրագմատիստական փիլիսոփայությունը գերակա արժեք է համարում կրթությունը:

Կրթության մեջ արժեքային հարացույցի ձևավորման մեթոդաբանական հարցերին են նվիրված Ա.Ֆ. Անիսիմովի, Ա.Գ. Զդրավոմիսլովի, Մ.Ս. Կագանի, Վ.Պ. Տուգարինովի, Ռ.Ա. Մարդոյանի և այլոց աշխատությունները: Կրթության արժեքների հիմնախնդրին են նվիրված Ն.Դ. Նիկանդրովի. Զ.Ս. Ռավկինի, Ի.Ֆ.Իսաևի, Վ.Ա. Սլաստենինի, Ն.Ա. Աստաշովայի, Լ.Վ. Թորգոմյանի և այլոց աշխատությունները:

Հատկապես մանկավարժական արժեքների դասակարգմանն են նվիրված Վ.Ա. Սլաստենինի և Տ.Ի.Չիժակովայի «Մանկավարժական արժեբանության ներածություն» աշխատությունը, որտեղ «Ուսուցչի արժեքային կողմնորոշումների համակարգը դիտվում է որպես նրա մասնագիտական և անձնային ինքնագիտակցության կառուցվածքային

կարողություն» (5, էջ 78): Իհարկե, սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը նպաստում են մի շարք գործոններ, որոնցից կարևորագույններն ուսումնական առարկաներն են իրենց հոգևոր արժեքային ներուժով:

Գեղարվեստական կրթության համակարգում ուսանողների կողմնորոշվածությունը դեպի համամարդկային հոգևոր-մշակութային արժեքներն է: «Հայ արվեստի պատմություն և տեսություն», «Հայ և համաշխարհային կերպարվեստի պատմություն», «Արվեստի ստեղծագործության ատրիբուցիա» դասընթացներում առկա յուրահատուկ մշակութային արժեքները հանդես են գալիս որպես գեղեցիկի, հայ ազգային ոգու, ազգային գիտակցության և ինքնության, հոգևոր մշակույթի, ազգային արվեստի հետ փոխադարձ կապի արժեքային դրսևորումներ՝ արտահայտելով ժողովրդի նվիրական ձգտումները:

Հայ ժողովրդի դարավոր պատմության ինքնության դրոշմն են կրում հայկական ճարտարապետությունը, միջնադարյան մանրանկարչությունը: Հայ նկարչության ավանդույթները իրենց արտացոլումն են գտել հետագա նկարիչների ստեղծագործություններում, որոնք այսօր դարձել են հայ մարդու հոգևոր ներաշխարհի ձևավորման և հարստացման հզորագույն աղբյուր ու խթան:

Դասընթացը ներառում է հայ արվեստի գլխավոր ճյուղերի՝ «պրակտիկ արվեստների»՝ ճարտարապետության և կերպարվեստի, մանրանկարչության, շինարարական արվեստի զարգացման պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Դասընթացներում տեքստային նյութին զուգահեռ տրված են ցուցադրական հարուստ նյութեր, որոնք ամբողջականացնում են հայ արվեստի բոլոր տեսակների անկրկնելիությունն ու փոխկապակցվածությունը, նրա արժեքային նշանակությունը: Դասընթացում ներկայացված գեղանկարչական, ճարտարապետական, քանդակագործական, դեկորատիվ-կիրառական արվեստի կոթողները «արտացոլում են հայ մշակույթի ինքնատիպությունը, բարձր մակարդակը և ազգային դիմագիծը: Ինչպես նշում է Ա.Աղայանը, Հ.Հակոբյանը և ուրիշները. «Ձևերի բյուրեղյա հստակությամբ, փոքր չափերի մեջ կոթողային կերպարով, շրջակա բնության հետ ներդաշնակ հայկական միջնադարյան պատմաճարտարապետական հուշարձանները հայ ժողովրդի «այցեքարտերն» են համաքրիստոնեական մշակույթում» (1,էջ10): Եվ, բնականաբար, ուսանողները դասընթացի ուսումնասիրության ընթացքում հաղորդակից են դառնում հայ ազգային հոգևոր-մշակութային արժեքներին՝ արժևորելով և յուրացնելով անցյալի ոգեղեն անկողոպտելի գանձերը:

Ազգը մշակույթով է հարթում իր գոյը հետագա դարերում և գոյատևում իր հոգևոր գանձերի շնորհիվ:

Նշված դասընթացների ուսումնասիրման ընթացքում դասախոսը ներկայացնում է նյութը, որում արտացոլված են շրջապատող իրականության նկատմամբ անձի պատկերացումները և հուզաարժեքային ընկալումը, միևնույն ժամանակ դասախոսը սահմանում է արժեքների աստիճանականությունը: Այսինքն՝ դասընթացը ազգային մշակույթին հաղորդակցելու և այդ մշակութային արժեքները ուսանողների կողմից յուրացնելու ու գնահատելու միջոց է, ինչը իր հերթին նպաստում է նրանց ստեղծագործական ներուժի դրսևորմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Մեր կարծիքով ուսանողների կողմից ազգային-հոգևոր արժեքների յուրացումը դասընթացի ուսումնասիրման ընթացքում իրականանում է արժեկողմնորոշիչ տեքստերի և նկարազարդումների միջոցով՝ նրանց հոգևոր էքզիստենցիալների վրա ներգործության շնորհիվ:

Եվ յուրացված արժեքները, որպես անձի համոզմունքներ դառնում են վարքի դրսևորման որոշակի միջոց և գոյության նպատակ (1. էջ 220):

Դասընթացների նյութերի յուրացման արդյունքում ընդլայնում են ուսանողների արժեքային պատկերացումները, միևնույն ժամանակ ընթանում է արժեքների յուրացում՝ նշանակալի մշակութային օբյեկտների, ազգային ճարտարապետական կառույցների, ստեղծագործությունների հետ շփման և և հոգևոր պահանջմունքների բավարարման հիման վրա: Հայ արվեստի պատմության վերաբերյալ տեսական գիտելիքները հիմք են հանդիսանում իմացական և հոգևոր-բարոյական, գեղագիտական արժեքների յուրացման, ստեղծագործական կարողությունների զարգացման համար: Հետազոտությունները ցույց տվեցին, որ դասընթացի ծրագրային նյութի յուրացումը ընթանում է հետևյալ ալգորիթմով.

ԱՂՅՈՒՍԱԿ 1



Դասընթացի ծրագրային նյութի ընթացքում արժեքային կողմնորոշումների և ստեղծագործական կարողությունների յուրացման ալգորիթմը.

Ուսուցանվող նյութը մատուցվում է դասախոսությունների, ցուցադրությունների, էքսկուրսիաների, ինքնուրույն գործնական աշխատանքների միջոցով՝ ներառյալ դասախոսի մեթոդական և տեխնոլոգիական ողջ զինանոցի կիրառումը:

Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ գեղարվեստական կրթության համակարգում ազգային-հոգևոր արժեքների յուրացման գործընթացը ընթանում է երեք փուլով՝

Առաջին փուլը կապված է մշակութային ժառանգության (գեղարվեստական ստեղծագործություններ, ճարտարապետական կառույցներ, քանդակներ և այլն) հուզական ընկալման հետ:

Երկրորդ փուլը կապված է ընկալվող օբյեկտի, երևույթի անձնական, ազգային, համամարդկային և հասարակական նշանակության գիտակցման հետ:

Երրորդ փուլը ընթանում է ուսանողի կողմից յուրացված արժեքների ներմուծումը հենց իր արժեհամակարգ:

Այսինքն՝ ուսանողների կողմից ազգային հոգևոր արժեքների յուրացումը ընթանում է դրանց նշանակության գիտակցման, ներքնայնացման գործընթացում: Այդ գործընթացում անձի վարքային դրսևորումներին համապատասխան՝ պայմանավորված արժեքների նկատմամբ անձի կողմնորոշվածությամբ, պատկերացումներով և հայացքներով ձևավորում են նրանց արժեքային կողմնորոշումները և արժեհամակարգը:

Ելնելով վերոբերյալից՝ կարող ենք վստահաբար փաստել, որ ուսանողների կողմից ազգային-հոգևոր արժեքների յուրացման արդյունավետությունը պայմանավորված է ինչպես տեսական, այնպես էլ գործնական պատրաստվածությամբ, որին նպաստում են արվեստագիտական առարկաները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, Երևան 2009թ.
2. Թորգոմյան Լ., Մանկավարժական արժեքանության հիմունքներ, Երևան, 2011թ.
3. Каган М. С. Человеческая деятельность. (Опыт системного анализа). М.-1974.
4. Моисеев Н.Н, Мир XX века и христианская традиция. Вопросы философи. 1993 N8.
5. Сластеннин В.А., Чижакова Т.И.Введение в педагогическую аксиологию,учеб. пособ. Высш. уч.зав., М.изд.цен.,,Академия,, , 2003, с. 192.

ОСВОЕНИЯ СТУДЕНТАМИ НАЦИОНАЛЬНО-ДУХОВНЫХ ЦЕННОСТЕЙ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ ИССКУСТВОВЕДЧЕСКИХ ДИСЦИПЛИН.

ГРАВАРД АКОБЯАН

Доктор исскуствоведения, профессор
кафедры истории и теории исскуства АГПУ им. Х.Абовяана

ЛИЛИТ ИСКОЯАН

Преподаватель, соискатель кафедры истории и теории исскуства АГПУ им. Х.Абовяана

В статье рассматривается методологические основы и этапи освоевания национально-духовных ценностей студентов в процессе изучение исскуствоведческих дисциплин. Обосновывается, что вышая образования как среда социально-культурной жизнедеятеольности способствует духовному обогащению и моральной свободы такой личности, которая способна носить бремя отвественности к земной цивилизации, культурному наследию, сохранению и обогащению общечеловечвских ценностей.

Характеризован алгоритм освоения студентами национально-духовной ценности, творческих умений и факторы, вляющие на этой процесс.

ASSIMILATION OF NATIONAL-SPIRITUAL VALUES BY STUDENTS WITHIN THE FRAMEWORK OF ACADEMIC DISCIPLINES OF ART

HRAVARD HAKOBYAN

Doctor of Theory of Art, Professor of the Chair of History of Art and Cultural Studies
of Khachatur Abovian Armenian State Pedagogical University

LILIT ISKOYAN

Lecturer, Researcher of the Chair of History of Art and Cultural Studies
of Khachatur Abovian Armenian State Pedagogical University

The article dwells on the methodological bases and phases of assimilation of national-spiritual values within the framework of art disciplines. It has been grounded that higher education, as a sphere of socio-cultural activities, contributes to the spiritual enhancement, moral freedom of individuals enabling them to be a relevant bearer of world civilization and cultural heritage – able of assuming the responsibility for that heritage and enriching the universal human values. The paper introduces and characterises the algorithm of assimilation of national-spiritual values and creative capacities and the factors of impact on those processes.